





որոնք պատրաստակամություն էին ցուցնում ընդդեմ իրանց վրա երկաթուղիների շինությանը Պարսկաստանում: Սակայն այդ ծրագիրը մինչև այժմ մնաց ծրագիր: այդ ժամանակից մինչև այսօր պարզվեց, որ, զլիսառաքալէս, իրեն գտնացող ծրագիր, կայ. 1) ճանապարհը ուսուցող սահմանից մինչև Թաւրիզ, շարունակելի մինչև Պարսից ծոցը. 2) ճանապարհը Էնդէլից, Ասուպից ծովի ավերակ, Ռաշտի վրայով մինչև Պարսկաստանի խորքը և մինչև Պարսից ծոցը: Առաջին ուղղությունը նշանակություն կունենայ ոչ այնքան Ռուսաստանի և Ռուսաց ապրանքի, որքան իրանի Պարսկաստանի համար, որովհետև այդ ճանապարհը կը կապի Թաւրիզ քաղաքը—Պարսկաստանի արևմտեան Եւրոպայի հետ ունեցած առևտրի կենտրոնը, ծովի հետ. Թաւրիզի միացումը Ռուսաց երկաթուղիների հետ այդ ուղղության վրա կարող է տեղի ունենալ կամ Քիֆլիս—Ջուլֆայի և կամ Նավայի կայարանի գծի վրա: Ջուլֆայի ուղղությունը այն առաւելություն ունի, որ նա կանցնի Երևանի քաղաքով Գիւղեքի միջով, իսկ ուղղությունը Նավայի վրայով այն առաւելություն ունի, որ տարածությունը Ասուպից ծովից մինչև Թաւրիզ աւելի կարճ էր լինի:

Ինչ վերաբերում է Էնդէլի-Ռաշտ ուղղությանը, նրա օգուտները կայանում են նրանում, որ այդ ուղղությունը ճանապարհը ամբողջ Պարսկաստանը կէս կանէր և ամենակարճ կերպով կը միացնէր Ասուպից ծովը Պարսից ծոցի հետ, մի միացումն, որին առաջուց տուել են պարսկական մեծ ճանապարհին նշանակությունը: Սակայն այդ ճանապարհի կառուցանելը շատ դժուար է Պարսկաստանի պէս երկրում: Վերջերս Կարսի երկաթուղու շինությունը մի քիչ մոտեցրեց Պարսկաստանին մեր երկաթուղային գիծը և շուտով որոշվեց մի գիծ տանել Կարսի գծի կայարանների մէկից—Ալեքսանդրոպոլից դէպի Երևան, այն պայմանով, որ այդ գիծը շարունակվի մինչև պարսկական սահմանը: Այդ ուղղությանը հետադուրս շինությանը կատարելը յաջանվեց ինժեներ Վուրցլինի վերջինիս ներկայացրած տեղեկություններից երևում է, որ ծրագրված գիծը սկսվելու է Ալեքսանդրոպոլից վեց վերստ հեռավորութեան վրա, հասնելու է Ուլուխանլու գիւղը, թողնելով Երևանը մի կողմ, 12 վերստ հեռու, և ուղղվելու է դէպի Ջուլֆա: Առաջին 20 վերստը մինչև Կիւլաճ գիւղը, գիծը անցնում է հոծ բնակված տեղերով մինչև վերջին մարդաբնակ կէտը, Բուլղաչէն գիւղը, զբոսնից յետոյ, ամբողջ 50 վերստ տարածութեան վրա ոչ մի գիւղ չը կայ, որովհետև չորս կողմը անդրդի է և պէտք կը լինի Արփաչայ գետից մեքենաներով ջուր հայթայթել. այդ անապատից յետոյ դարձեալ գալիս են մարդաբնակ տեղեր—Ղալալներ, որոնք բաժանվել և բրնձի մեծ մրցակցութիւն կայ: Այդ դուռը գծի շինութեան արժողութիւնը հաշուում են այսպէս. 1) Ալեքսանդրոպոլից մինչև Ուլուխանլու գիծը կը նստի 5,275,000 ռուբլի, ուրեմն վերստին դալիս է 40,880 ռուբլի. 2) Ուլուխանլուից մինչև Երևան—442,750 ռ. կը 35,700 ռ. վերստին. 3) Ուլուխանլուից Ջուլֆա—7,422,500 ռուբլի կամ 44,290 ռ. վերստին: Ուրեմն ընդհանրապէս գիծը կը նստի 13 միլիոն:

Մասնավորապէս ներսում յայտնվեց, որ Ռուս ձեռնարկողները ստացել են պարսից կառավարութիւնից օ յ օ ն ց և ո ի ա յ շահագործելու: Առաջարկելի հանգիստը 8,400 քառակուսի վերստ տարածութեան վրա, այդ ձեռնարկողները ներկայացուցել ինժեներ Կուրալով միջնորդեց, որ տնտեսական, տեխնիկական հետազոտություններ կատարվեն Եւրալի կայարանից դէպի պարսից սահմանը Օրդուբադի վրայով:

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Փետրվարի 22-ին

Գաւառական կեանքին ծանօթ ամեն մի մարդ անշուշտ գիտէ, որ փոքր քաղաքների ու ավանների համար փողոցների անունները բոլորովին չունեն այն նշանակությունը, ինչ որ ունեն բազմամարդ կենտրոնների և լայնածաւալ մայրաքաղաքների համար: Եւ սրա պատճառը շատ հետաքրքիր է: Ալեքսանդրոպոլին էլ, որպէս մի փոքր ու յետ ընկած գաւառական քաղաք, երկար ժամանակ կարիք չունէր օգտվելու իր փողոցների անուններից: Բայց սրանից մօտ երկու տարի առաջ, նախկին գաւառապետ Ստոպանսկու օրով, համարների առնվեցան մեր անունը և երկաթի թերթերի վրա գրել վեցին և պատերին խփվեցին քաղաքի փողոցների անունները: Այդ անուններից շատերը, որոնք կըրկվեցին պ. գաւառապետի կամբով, շատ անգուր և նշանակություն չունեցող անուններ են. օրինակի համար «ВЕРХНЯЯ,

Короткая, Нижняя Короткая, Извоищя, Тихая, Кривая» և այլն: Եւ մենք այժմ, հեռու մնալով այս անունների մէջ զեղարեւոտականութիւն որոնելու ցանկութիւնից, այլ միայն աչքի առաջ ունենալով պարտքի ու գիտակցութեան մի այլ գաղափար, հրապարակով առաջարկում ենք Ալեքսանդրոպոլի քաղաքային ինքնավարութեանը փոխել այդ փողոցների անունները, և կապել նրանց մեծ դէպքերի ու անունների հետ: Եւ որովհետև, մի քանի ամսից յետոյ համայն Ռուսաստանը տօնելու է իր ամենահանճարեղ գաւառներից մէկը՝ Ա. Պուշկինի ծննդեան հարւարածակը, աւելի նպատակայարմար կը լինէր այդ փողոցներից մէկը անունելու ի պատիւ Ներսիս «ПУШКИНСКАЯ» և Ալեքսանդրոպոլի սրանով իր յարգանքն ու սէրը ցոյց կը տար «ЕВГЕНИЙ ОНГЕНЬ»-ի տաղանդաւոր հեղինակին: Ամենքիս համար համակրելի անունների թիւին են պատկանում նաև մեր կովկասեան մի քանի տաղանդաւոր անձնավորությունների անունները: Յոյս ունենեմ, որ Ալեքսանդրոպոլի քաղաքային ինքնավարութիւնը մեր այս առաջարկութիւնը իր հերթական հարցերից մէկը կը դարձնէ:

Կերտաւան Կարինեան իր երկրորդ ներկայացմանը խաղաց Արշակ II պատմական ողբերգութիւնը և երկու կատակերգութիւններ: Կարինեան՝ Արշակի դերում բաւարար էր, իսկ սիրողները, փորձելի բացառութեամբ, աւելի թողէին՝ քան առաջին ներկայացման ժամանակ: Այս յանդանքը այնքան խաղացող սիրողներին չէ, որքան խաղացող տուողներին: Այս անգամ դանիճը համարեա դատարկ էր, իսկ կարգապահութիւնն ասած բանը բացակայ էր բեմի վրա:

Գ. Մ.

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Փետրվարի 21-ին

Փետրվարի 14-ին հասարակական ժողովարանի դահլիճում կայացաւ պարահանդէս յոգուտ տեղիս իրական տարրական դպրոցի՝ նախաձեռնութեամբ նոյն դպրոցի պատուաւոր հոգաբարձուհի՝ գաւառապետի ամուսին տիկին Մանիշիկի: Պարահանդէսը կազմված էր եւրօպական և ասիական պարերից: Նուագում էր զինուորական նուագախումբը, որը յատկապէս դրա համար բերված էր Յարսկիէ-Կորոզից: Պարահանդէսը բաւական աջողութիւն ունեցեալ և զուարճութիւն պատճառեց հանդիսականներին. հասարակությունը ցրվեց գիշերվայ ժամը 4-ին: Դանիճում չինված էր երկու բուֆետ, որտեղ խմիչներ ծախում էին Ա. Մանիշիկեան և իշխ. Թումանյան: Մուտքն եղաւ տոմսակներից՝ մօտ 500 և բուֆետից՝ 215 ռ. Զուտ արդիւնքը մնում է դպրոցին մօտ 500 ռուբլի:

Այս դպրոցը բացված է սրանից երեք տարի առաջ, երբ փակվեց այստեղի նախկին հայց եկեղեցական-ժրական ուսումնարանը: Դպրոցն երկրպետն է՝ ինչոք բաժանմունքով, որոնցից I բաժանմունքն առանձին է, իսկ II և III, IV և V բաժանմունքները միացրած. նրանում սովորում են 142 աշակերտուհիներ, որոնց համարեա կէսը հայուհիներ են: Ուսուցչական խումբը բաղկացած է երեք վարժուհուց, հայ և ռուս կրօնուսուցչներից և երեքեղբորութեան ուսուցչից: Աւանդելի առարկաների թիւում են՝ հայոց լեզու և կրօն՝ չաբախական մի մի դաս հայ աշակերտուհիների համար: Դպրոցը չունի մշտական ապահովություն. նա բացված է թշուալարամբ (15 ռ. տարեկան) և պատահական աղբիւրների յուսով: Բայց պէտք է խոստովանել, որ թէ հոգաբարձուհի տ. Մանիշիկ և թէ դպրոցական վարչութիւնը գովելի եռանդով կառավարում են դպրոցը, կազմելով յաճախ ներկայացումներ, երեկոյներ, պարահանդէսներ յօգուտ դպրոցի: Ուսումնարանական խիստուութիւնը ցանկանում է այս դպրոցը վերածել «Մարինիկի դպրոցի», որի համար առաջարկություն եղաւ քաղաքին՝ տալ տարեկան 600 ռ. դպրոցին այն պայմանով, որ մնացած ծախսը յանձն կանեն կառավարութիւնը: Մեր դուռն իր ժամանակին ընդունեց այս առաջարկութիւնը, բայց միջոցների սղութեան պատճառով չէ կատարում և դեռ կատարելի որոշում: Այս պատճառով այս խնդիրն առ այժմ մնում է առկա:

Քիֆլիսի կոնստիտուցիոն կարգադրութիւն է ստացվել՝ գումարել ծխականների ժողով և վճռել թէ ինչ նպատակին յատկացնել մոմավաճառութեան արդիւնքը, քանի որ այդ նս գործութիւնը չունի եկեղեցական-ժրական դպրոցը: Մոմավաճառութիւնից նախկին տարիները գոյանում էր մօտ 2000 ռ. տարեկան, մոմը ծախվում էր առանձին խանութում, որը կառավարում էր նախկին հայոց դպրոցի հոգաբարձու բժիշկ Մ. Մովսիսեան: Եկեղեցական շահերը պահանջում են, որ շուտով կայանաւ ծխականների ժողով

և վերակազմվի նախկին մոմավաճառարները՝ յանձնելով նրա կառավարութիւնը ս. Կարապետ մայր եկեղեցու երէցփոխին: Մեր գործակալ Արշակ քահանայ Տէր-Ստեփանեան մտադիր է առաջարկել ժողովին՝ յատկացնել մոմավաճառութեան արդիւնքը քահանայական դասնակին, որն այն ժամանակ կը վերացվի: Չէ կարելի համակրութեամբ չը վերաբերվել գործակալի այս մտադրութեան, քանի որ դրանով հասարակութիւնը նոր ծանրութիւն չի զգայ գանձանակը վերացնելու համար: Կարելի է յատկացնել մոմավաճառութեան որոշ մասը:

Մեր երեք եկեղեցիների երէցփոխների պաշտօնավարութեան ժամանակը վաղուց լրացել է: Զարմանում ենք, թէ ինչի Քիֆլիսի ծոյլ կօնստիտուցիոն նոր ընտրութիւն չէ նշանակում: Այն ինչ մեր եկեղեցական գործերը սարսափելի ցաւալի և ողորմելի վիճակի մէջն են: Հարկաւոր են նոր եռանդոտ երէցփոխներ, որ բարեկարգեն եկեղեցիները:

Մի քանի տարի է, ինչ Աուֆէրման առևտրական ֆիրման բացել է այստեղ երկաթգործական մեքենաների և գիւղատնտեսական դեղերի բաժանմունքը: Բաժանմունքի կառավարչն է Ա. Մանիշիկեան. նա բաւական աշխուշութիւն է ունենում: Շնորհիւ բոլր բաժանմունքի՝ չըջկայ գիւղերում տարածվում են նոր սիստեմի գործիքներ և կանծաւորվում է այգիների բժշկութիւնը:

Բարեկենդանի օրերը անցնում են առանց որ և է զուարճութիւն պատճառելու հայ հասարակություն: Դպրոցների փակումից յետոյ՝ ձմեռը չենք արժանացել հայոց ներկայացման: Մեր թատերասերների վարժուհը դատապարտել է: Ետտ խօսեցին, պիէտներ բերել տուն Քիֆլիսից, բայց ներկայացումը չը կայացաւ. նա յետաձգված է մեծ պատիւի Յանկալի է, որ այս անգամ Վ. Նիկիտիկեան, որը վեներան է Սըղ-նախի հայոց բեմի, անպատճառ աջողեցնէ ներկայացումը. այդ կախված է նրանից:

Դաման ձմեռը ձեռք չէ վերցնում մեզանից: Դարնային պարզ օրերից յետոյ ամսին 17—18-ին մեծ ձիւն եկաւ, ծածկելով գետինը 3/4 արշին խորութեամբ: Բոքն ու բարանը տատկացրին ձմեռային ցուրտը: Նշեմքներ և հոնի ծառերը իշացան, որոնք արդէն ծաղկել էին: Մասնակ թանգութիւն է: Ժողովրդի տրամադրութիւնը մուսլ է:

Յ. Քրիզոբեան

ՆԱՄԱԿ ԽՐԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Բալանսին, փետրվարի 24-ին

«Մշակութիւն» № 25-ի մէջ պ. Ա. Կարանիկեանի խմբագրութեանը ուղղութեամբ նամակը առիթ է տալիս մեզ մի քանի խօսք ասելու:

Պարոն իր նամակում, որը վերաբերում է Բալանսինի նախաձեռնութեանը և քանութիւնների, ցանկութիւն էր յայտնել, որ մեր նախաձեռնութեանը իրանց հայով օրեկան մի անգամ անդադարաւ տեք կերակրով բարեկենդանի բանտերին չոր ծաշը, աւելացնելով և այն որ այդ ծախսը շատ չնչին է՝ հանձնառելով բանտերների տուած միլիոնները հետ:

Այդ և դրա նման մի քանի կենսական կարիքների մասին մենք առիթ ունեցանք խօսելու մի քանի կառավարչների հետ, որոնք սրտից ցաւով յայտնեցին, որ այդպիսի մի իրաւունք իրանց չէ տուած, որ այդ անկող կախված է միմիայն հանքաւորների ցանկութիւնից: Բայց մեր տեսած մի քանի փորձերից մենք բոլորովին հաւատացած ենք, որ մեր կառավարչները, եթէ ուղեման, միացած ուժով շատ բան կարող են անել: Դժուարը միմիայն կամենալն է: Բայց չեն անում: Եթէ հարցնէ ինչու, մենք կը պատասխանենք, որ մեր կառավարչներից շատերը առհասարակ աշխատում են ամեն կերպ իրանց շահագործելու: Դրոք գալ և դրա համար է, որ ամեն ջանք դրած են դնում նախաձեռնել ծախսերը որքան կարելի է կրճատել: Չէ որ շահագործող անտեսաբէտ կառավարչին աւելի շատ կը սիրէ, և որ ամենակալաւորն է՝ չէ որ մեր մի քանի մասնագէտ պարոնները, օրինակ վերցնելով իրանց ընկերներին, աւելի իւղոտ պատահներ են աչք տնկած:

Բայով մեր նախաձեռնութեանը, կանենք, որ նրանք առհասարակ սիրում են օրինակներ: Առաջին օրինակը մեզ տուին հանդուցեալ Սոգոմոն Կրասնիկեանի որդիքը, որոնք օրեկան մի անգամ իրանց ծառայողներին բախտաւորացնում են տաք կերակրով: Եւ ինչ էք կարծում, այդ ծախսը Ֆիրմայի վրա նստում է ընդամենը ամսական եօթնասուն ռուբլի, որը երեք ժեշուկա նաւթի գին է: Միւս օրինակը տուեց պարոն Համբարձում Մեղիբեան, որն իր ծախսով չինած խանդոցի բանտերներին կերակրում է վերջինների հաշով: Եւ որովհետև մի քանի նախաձեռնութեաններ և մի և նոյն ժամանակ կառավարչ են իրանց հանքերի, ինչպէս, օրինակ, Ա. Կրասնիկեան, Ն. Տէր-Յակոբեան, Նիկ. Աղաման, Մատթեոսեան, Մ. Տէր-Գաւառեան, հետեւապէս աւելի մօտ ծանօթ են ծառայող դասակարգի կարիքներին, պէտք է որ այդ պա-

րոնները իրանք սկսեն այդպիսի բարի գործեր և մնացած ֆիրմաներին էլ օրինակ տան:

Թաւրի Տէր-Յովհ.

ՆՆՈՒՄՆԻ ԼՈՒՐՆԻ

Ինչպէս յայտնի է, համալսարաններում ժամանակաւորապէս դադարեցված են դասախօսութիւնները և այդ պատճառով ուսանողներից շատերը վերադարձել էին իրանց տեղերը: Այժմ «Навразье» լրագիրը հաղորդում է, որ Քիֆլիս եկած ուսանողները նորից յետ են կանչված համալսարաններ:

Այսօր, մարտի 3-ին, երկրագործութեան միջնորդի լրագրի դիւանատանը նշանակված է յատուկ յանձնաժողովի նիստ, որ պէտք է զբաղվի Պարիզի ցուցահանդէսին մասնակցելու խնդրով: Յանձնաժողովի նիստին հրաւիրված են իշխան Անդրանիկով, Տիմօֆէեւ, Տարատինով, Փիրալով, Քալանթար, Բոլով և Լեւնեւսկի:

Գիշերային ապաստարանում գտնվող հայ պատանի Շաւարշ Իզմիրեանի օգտին ստացանք Քիֆլիսում ապրող մի պարոնից 10 ռուբլի:

Պետերբուրգից հեռագրում են, որ մարտի 12-ին պետական խորհրդի ընդհանուր առեանում վերջնականապէս պէտք է ընծիկ հաղորդակցութեան ճանապարհների միմիատրութեան վերակազմութեան ծրագիրը:

Փետրվարի 24-ին Պետերբուրգում վախճանվեց Ռուսաց գրող Վլադիմիր Սոկոլովի Միլիոնիկը, որ յայտնի է նաև «Կոյոմենսկի Կանդիդ» կեղծանունով: Նա «Новостя» լրագրի գլխաւոր աշխատակիցներից մէկն էր և աշխատակցում էր այդ լրագրին նրա հիմնադրութեան օրից: Նա աշխատակցել է «Толк» լրագրին և յայտնի է Ռուսաց հասարակութեանը իր սրամտ և գեղեցիկ ֆելիտօններով: Նա ունի և ուրիշ շատ գրեւածներ, որոնց մէջ գլխաւորներն են «Литературный Миръ» ժողովածուն և «Исторические этюды русской жизни» եռահատոր աշխատութիւնը:

Մեզ հաղորդում են, որ սիրողների խօսքային խումբը, որ աշխույթեալ երգեց Արտիստական ընկերութեան և Քիֆլիսի ժողովարանի մէջ, մտադիր է պատրաստել նոր խմբական երգեր: Խօրի զեկավարը պէտք է լինի Գ. Փուլինով:

ԲՈՒՏՈՎԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 13-ին մի սարսափելի դէպք պատահեց. մի յոյն, մօտաւորապէս 40 տարեկան, օրը ցերեկով ընտնում է մի-ուսու-այրի-կնոյ տուռ, դիպակահարում է նրան և նրա 15 տարեկան աղանձին: Այդ դէպքի պատճառը հետեւեալ կերպով են բացատրում: Ոճրագործը մի տարուց աւել ապրում էր այդ կնոյ հետ և վատնելով իր ամբողջ ունեցածը, մնում է բոլորովին մերկ: Սիրտն տեսնում է, որ այդ ևս չէ կարողանում իր պահանջները լրացնել ստիպված է ոստիկանութեան միջոցով տանից դուրս վաճել սիրականին: Ոճրագործը, տեսնելով իր դժբախտութիւնը, մանաւանդ մտածելով, որ չէ կարող գտնել այս ձմեռվայ ցրտերին մի յարմար գործ, կատարում է այդ անտառային Մօտաւորապէս ծանուցում է իր սիրտնու տուռը և սպանութիւն գործելուց յետոյ աշխատում է տուռը կրակ տալ: Բայց շուտով օգնութեան է հասնում մօտիկ խանութպանը, որն իսկույն թիթի կերպով գնդակի հարուած է ստանում: Վրա է հասնում ոստիկանութիւնը և աշխատում է կալանաւորել յոյնին. ոճրագործը տեսնում է, որ այդ ևս փախուստի տեղ չը կայ, անորձանակի բերանը դարձնում է դէպի իրան և արձակում է. զընդակը ծակում է կոկորդը և յոյնը հետեւեալ օրը նմանապէս մեռնում է:

ՍՕՂԻՑ մեզ գրում են. «Ռուսաստանի սովետական թշուառների վիճակը ամօքելու կոչը բնական էր, որ արձագանք գտնէր նոյնպէս մարդկութեան մի ուրիշ ցաւատանք մասին՝ հայ դարձական գիւղացիների սրտում: Սօջի չըջկայ հայ գաղթական երկրագործները առաջին առաջարկին իսկ փութացին մասնակցել ընդհանուր ժողովարարութեամբ և այդ նպատակով հաւաքեցին 350 պուղ սիմիդը, որը մի ծանօթ հայ վաճառականի կողմից 175 ռ. փողի վերածվեց և այդ փողը յանձնվեց հարկ եղած տեղը: Արքան էլ չնչին լինի այս օգնութիւնը, դա մի աւելորդ անգամ ևս ցոյց է տալիս, որ հայ շինական իր ծով-թշուառութեան մէջ իսկ ընդունակ է ուրիշ կարօտեաների մասին էլ մտաբել և իր լուսման չը խնայել ըրիտօնեայ քաղաքակրթութիւնը:







Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул № 13.